

391.996
U-78

2011-05

891.542-93
Ա-78

106

Հրատարակւորիւն „Ն Ի Է Բ Մ Ա Ն Ո Ի Կ Ն Ե Բ Ի Ն“ Բնկերութեան № 7

ՄԱՐԳԱՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ

— ԵՐԵՔ ԽՐԱՏ —

ՊՂՆՁԷ ՔԱՂԱՔԻ ԶՐՈՅՑՆԵՐԻՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



Թ Ի Ֆ Լ Ի Զ
Էլէկտրատպ. Օր. Ն. Ս. Գալանեանի, Պոլից. 7
1913

891.549-93
Q-78

ՄԱՐԳԱՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ

891.995.
W-79 պ.


== ԵՐԵՔ ԽՐԱՏ ==

ՊՂՆՁԷ ՔԱՂԱՔԻ ԶՐՈՅՑՆԵՐԻՑ

10.02
6503

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Հ.Ա.Խ.Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ր.Ա. ПУБЛИЧНАЯ Библиотека
7/ХІ—1922
Значи А. Машинкова
* Ա ՄՅԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ԵՐԵՔ ԽՐԱՏ

ՊՂՆՁԻ ԲԱՂԱՔԻ ԶՐՈՅՑՆԵՐԻՑ

I.

Իմաստուն էր Խիկարը, և նրա իմաստութեան համբաւը
գուրս էր եկել Ալթունի պալատից ու տարածւել նրա տէրու-
թեան սահմաններից էլ դէնը:

Երկրէ երկիր իմաստուններ էին անցնում ու գալիս նրա
խրատները լսելու: Թագաւորներ ու իշխաններ էին գալիս նրա
խեղճի առաջ գլուխ խոնարհելու:

Բայց իմաստութիւնը չէր Խիկարի անունն անմահացնողը:
Իմաստութեան հետ նա ունէր մի սիրտ, որ յուզւում էր ու-
րիշի վշտից, և նրա սէրը սրբում էր թշւառի աչքերից ար-
ցունքները: Երկրէ երկիր թափառական մուրացիկներ ու տնանկ
ճամփորդներ էին գալիս նրա մօտ գուրգուրանք ու սէր տես-
նելու:

Եւ Խիկարը պարծենում էր աւելի անոք ու անօգնական
թափառիկների այցելութեամբ, քան իմաստունների ու պալա-
տականների ողջոյնով:

Ոչ ոք չէր քաշուում նրա դարբասը բաղխելուց, ոչ մի օտարական չէր անցնում նրա շէմքի առջևից, առանց ներս մտնելու: Ծառաներն այլևս չէին հարցնում, թէ եկողն ո՞վ է— խրատի ծարաւ օտարական իմաստունն է, թէ հացի կարօտ մոլորեա՞ծ ճամփորդ: ամենքի առաջ դռները բաց էին, բոլորին ներս էին առնում:

Ամիրխանն էլ ուզեց Խիկարի իմաստութիւնը լսել և նրա հացը վայելել: Եւ անա մի օր, երբ արեւ մօտեցել էր հորիզոնին, Ամիրխասը ներս մտաւ Խիկարի դարբասից, էջը առջևը գցած:

Հեռու տեղից էր գալիս Ամիրխասը և երկար ժամանակ ճանապարհին էր եղել: Էջը սովածութիւնից հազիւ էր քայլում և տէրը կարծես էլ ոյժ չունէր նրան «չճշ, չճշ» անելու: Երկուսն էլ ծածկւած էին փռշով:

Էջը տարան ախոռը և գարի լցրին առաջը, իսկ հիւրին առաջնորդեցին Խիկարի մօտ: Կերաւ, յագեցաւ օտարականը, հանգստացաւ և օրհնեց Խիկարին:

Այդ գիշեր Ալթուն թագաւորի պալատում խնջոյք կար: Հրաւիրւած էր և Խիկարը: Խիկարը մտածմունքի մէջ ընկաւ. չէր կարող նա օտարականին տանը թողնել և ինքը գնալ խնջոյքի. դա հակառակ էր սովորութեան և նրա հիւրասիրական կանոններին դէմ: Հիւրի պատճառով էլ չէր կարող տանը մընալ, որովհետև առանց Խիկարի մինչև այդ օրը ոչ մի խնջոյք չէր եղել պալատում: Խիկարը լաւ համարեց հիւրին էլ հետը տանել: Չէ՞ որ ամենից շատ այս տեսակ մարդիկ են ուրախութեան ու խնջոյքի կարօտ:

— Միբե՛րիս, ասաց Խիկարը, — հիւրն Աստծուն է, և ես շատ շնորհակալ եմ Աստծուց, որ քեզ ուղարկել է ինձ մօտ: Այսօր միասին պիտի գնանք թագաւորի պալատը խնջոյքի: Չես եղել

պալատներում, թագաւորների ու իշխանների հետ սեղան չես նստել, բայց ոչինչ, մի քաշիլ ու մի ամաչիլ. միայն լսիր իմ խրատները. լսիր, և շատ գոհ սրտով տուն կը դառնաս խնջոյքից: Քեզ կը տամ երեք խրատ. այս խրատները միտդ պահիր ու չես զղջայ:



— Տեղդ ճանաչիր, մի նստիր վերև, որ հետզհետէ ներքև չը գնաս. ցած նստիր, որ բարձրանաս վերև:

— Մի մէջ ընկնիր ուրիշի խօսակցութեանը և երբ քեզ հետ խօսեն, տասը լսիր, մէկը պատասխանիր:

— Մինչև քեզից բան չուզեն, մէջ չընկնես ու չըտաս:

Եթէ այս խրատները պահես, սիրելիս, պալատում բոլորը քեզ կը յարգեն ու ես շատ գոհ կը լինիմ, որ քեզ տանում եմ հետս:

Լսեց Ամիրխասը այս խրատները և ասաց.

— Շնորհակալ եմ, տէր, քո խրատների համար. կը կատարեմ, ինչ որ ասացիր:

Եւ սաստիկ ուրախացաւ, որ թագաւորի մօտ խնջոյքի է գնալու:

II.


Երեկոյեան նրանք պալատ գնացին. խնջոյքն սկսեց: Ամիրխասը Խիկարի կողքից չէր հեռանում: Նստեցին թագաւորն ու թագուհին և աջ ու ձախ կողմից մեծամեծներն ու իշխանները: Խիկարը նստեց թագաւորի աջ կողմը, նրա մօտ:

Էլ չըսպասեց Ամիրխասը, որ հիւրերը տեղաւորւեն, յետոյ ինքը նստի: Դէս նայեց, դէս նայեց և տեսաւ Խիկարի մօտ մի մեծ զարդարուն բարձ է դրած. էլ աջ ու ձախ չը նայեց, հիւրերին բոթելով դէմ ու դէմ գնաց ու ծալապատիկ բազմեց Խիկարի կողքին և մէջքը հպարտ-հպարտ դէմ աւեց պատի փափուկ գորգին: Շատերը նրան նայեցին. նա գլուխը բարձրացրեց, կզակը իրան քաշեց և այնպէս փքւեց, որ կարծես թագաւորն ինքը լինէր:



Խիկարը նայեց նրան աչքի տակով, գլուխը տարուբերեց, շփեց երկար մօրուքը ու խուլ հառաչեց: Բայց ոչինչ չասաց նրան:

Սենեկապետը հրամայում էր հիւրերին և ամեն մէկին իր տեղն էր ցոյց տալիս նստելու: Հիւրերից մէկը մօտեցաւ Ամիրխասին և ձեռքով նշան արաւ, որ մի քիչ ցած քաշւի: Նա լուռ, թաթերին յենւելով սողաց դէպի ցած: Եկաւ երկրորդը



և խնդրեց նրան մի քիչ էլ ցած իջնել. նա նոյն ձևով գնաց դէպի ցած: Այսպէս իրար ետևից գալիս էին ու գալիս, և նա հետզհետէ ցած գնալով, հասաւ դռանը:

Նստած էր դռան ետևը Ամիրխասը և ծառաները կերակուրները բերելիս ու ամանները տանելիս, կերակուրը կաթեցնում էին նրա գլխին և ուսին. կամ թևին ու ծնկանը դիպչելով անցնում ու դառնում:

Խնջոյքը տաքացաւ. երգն ու խօսակցութիւնը կենդանացան: Համադամ կերակուրների այգալիսի առատութիւն և այգքան անուշահամ գինի կեանքումը չէր տեսել Ամիրխասը: Գինին խմել էր, կատարը տաքացրել և խելքը կորցրած հրոհւում էր կամ ձայնակցում էր նւագոյներին ու երգողներին: Պատմում էր մօտը նստածներին իր քաջագործութիւնները. թէ






ինչպէս առիւծի բերան է պատ-
ռել, թէ ինչպէս ձի է գողացել,
թէ ինչպէս կնոջը ծեծել է: Եւ
վերջապէս պատմում էր, թէ
ինքը Սպահանու գինի է խմել,
Իրանի խաղող է կերել, չու-
Հնդկաստանի նռան օշարակ է
վայելել. պատմում էր թէ ինչ-
պէս թագաւորի սեղանն աղքատ
է, գինին անհամ՝ կնկայ խմե-
լիք: Կողքի նստողները ձանձրա-
ցան նրանից և քչփչալով նրան
ու խիկարին էին նայում. էլ ոչ
ոք նրան չէր լսում:

Բայց մեր Ամիրխանը չը յուսահատուեց. չէ՞ որ խիկարը
նրան ասել էր՝ համարձակ եղիր: Նա ձայնը բարձրացրեց և
խռպոտ ձայնով սկսեց խօսել աւելի հեռու նստողների հետ.
էլ չէր թողնում ուրիշին խօսել. մէջ էր ընկնում, ընդհատում
էր խօսողներին և ինքը բլբլում...:

III.

խիկարի զիմաց, մէջ շարքում նստած էր մի երիտասարդ
իշխան, անունը Փուշքար: Պճնազարդ ու գեղեցիկ էր Փուշքա-
րը և կտրիճի համբու էր վայելում: Նա նոր էր վերադարձել
որսորդութիւնից և այդ օրը թագաւորին ընծայ էր բերել իր
սպանած առիւծի մորթին: Բայց մորթին բաւական չէր, նա
ուզում էր պատմել թէ ինչպէս միայնակ սպանեց ամենի. գա-
զանին և թագաւորի ու հիւրերի գովասանքը լսել:

— Մութ անտառի մէջ էինք, — սկսեց նա, — արեւ
սաղարթներին մնաս բարե էր ասում: Կենդանիներն
ու գազանները որջերից դուրս էին գալիս
որս անելու, շատերն էլ պատրաստութիւն
էին տեսնում որջերը գնալու: Այդ ժա-
մերին է, որ առիւծը լճի մօտ
թագնում է, ջրի եկող կենդա-
նիներին որսալու համար: Ես որ-
սորդներին շրջանաձև ցրեցի
ծառերի արանքները, բարձրա-
ցայ հաստաբուն կաղնու ճիւ-
ղերին: Յանկարծ տեսայ մի
հսկայ առիւծ... մորթին գեղե-
ցիկ Հնդկաստանի պալատներում
էլ չի ճարւի: Գլուխը կարմրաւուն բծերով՝ արքայական ապա-
րանքի աննման զարդ... Նա դանդաղ մօտենում էր լճին:
էլ չը սպասեցի, որ դարան մտնի. արծւի թռիչքով ցած սլա-
ցայ ճիւղից ու սուրս հանած՝ արշաւեցի դէմ ու դէմ նրա վրա:
Նա ինձ նայեց. կատաղի աչքերը արիւնոտ էին, մայր մտնող
արեւի պէս կարմիր. ցից ժանիքները սրած՝ պողպատից էլ փայ-
լուն. թաթը՝ հինգ լղրանոց գուրդի պէս ծանր: Նա կծկեց, որ
յարձակւի ինձ վրա: Մահկանացուն չէր կարող բաց աչքերով
զիմանալ այս տեսարանին: Բայց թագաւորի որսորդ Փուշքա-
րին չէր վայելի, որ ձայն տայ ընկերներին, կամ անից գոռայ
և կամ ոտքերը գետնին մեխած դողայ: Սուրս ուղղեցի դէպի
նրա բաց երախը և...



— Էհ, էտ քաջութիւն է որ, — մէջ ընկաւ գինուց տաքա-
ցած Ամիրխանը, — մի օր կինս փլաւն այրել էր և ես մի աքա-
ցով աֆսոսեցի գետին գլորեցի նրան, որ մինչև երեկոյ ուշքի չեկաւ:

Հիւրերը, որ շունչները պահած լսում էին Փուշքարին, շուտ տւին երեսները դէպի Ամիրխասը և բարձրաձայն հրահրեցին: Մռայլեց երիտասարդ Փուշքարը, ատամները կրճատեց և նայեց Խիկարին ու բարկութիւնը զսպեց:

Կարմրեց Խիկարը և ճակատի վրա սառը քրտինքի կաթիլներ բուսան:

— Աւաղ, երկրորդ խրատս էլ քամին տարաւ առաջինի պէս, մտածում էր նա:

Իսկ Ամիրխասը չէր նայում Խիկարին:

IV.



Բ-Բ

Ուրախութիւնը թեքում էր իր արեւմտաքին: Ձայները յոգնել ու խռոտուել էին: Կերակուրների ամանները դուրս էին տարւում: Վերջին ամանը ներս բերեց, կտրիճ Փուշքարի սպանած եղնիկն էր, մեծ սկուտեղի մէջ դրած, փլաւի գլխին: Մատակարարը երկու ձեռքով բարձր բռնած սկուտեղը, բերեց և հանդիսաւորապէս դրեց երիտասարդի առաջ, բոլորած և տախտակի վրա: Նա պէտք է կտրատէր ու բաժանէր որսը իր ձեռքով: Մատակարարը հեռանում էր և արդէն դռան մօտ էր, որ Փուշքարը ձայն տուց.

— Դանակ, դանակ... Դանակը մոռացել ես, դանակ տուր:

Մատակարարը շփոթւած դուրս վազեց դանակը բերելու: Ամիրխասը չր համբերեց. վեր թռաւ կանգնեց տեղից և սլացաւ դէպի երիտասարդը. նրա գոտուց կախ էր ընկած մի ոսկե-

րակոթ դանակ. մի թափով քաշեց դանակը ու...

— Առ, համեցիր, կտրիր, — ասաց նա և դանակը եղնիկի կողը ցցելով, հպարտ-հպարտ, փորը դուրս դցած ու դունչը ցցած տեղը դարձաւ:

— Հէյ վախ, վերջին խրատս էլ կրակն ընկաւ, — մտմտաց Խիկարը, — և թող Տէրն ազատի իմ հիւրին կրակի բորբոքումից:

Իսկ Փուշքարը ապշած, նայեց Ամիրխասին կատաղի աչքերով և դանակը քաշելով եղնիկի կրծքից՝ ուզում էր շարտել նրա վրա: Բայց իրան զսպեց. նայեց դանակի փղոսկրեայ դարդարուն կոթին ու մի բան մտմտաց. ապա նայեց շեշտակի Ամիրխասին և ասաց նրան առիւծի մօնչիւնով.

— Է՛յ, մարդ, ո՞վ ես դու, չեմ ճանաչում քեզ: Ո՞րտեղից գտար այս դանակը. սա իմն է, փղոսկրէ կոթից ճանաչեցի: Վաղուց է, փնտռում էի, գողացել էին ինձանից. և այժմ գողին գրտայ... Դո՛ւ ես գողը...


Եւ դառնալով թագաւորին, ձեռները դրեց կրծքին, խոնարհ զլուխ տուց ու ասաց.

— Տէր, արեւի ճառագայթ և կայծակի դաւակ, թափիր քո բարկութիւնը յանցաւորի գլխին: Պատժիր գողին, ինչպէս մեր օրէնքն է հրամայում: Կտրել տուր նրա ձեռները, որովհետեւ նա գողութիւն է արել. շիկացած երկաթեայ թասակ հաղցրու նրա գլխին, որովհետեւ նա դանակ է գողացել. իսկ դանակի գողը մարդասպան է:



Բ-Բ

Ինչպէս մի ահագին քամի, երիտասարդի ուժգին ձայնը սլացաւ դահլիճի երկարութեամբ. հիւրերի գլխով փոթորիկ անցաւ և նրանց մագերը փշացած դիք-դիք կանգնեցին: Մի վայրկեան լռեց ամեն ինչ. բոլորը բերանները բաց, աչքերը չռած, թագաւորին էին նայում:



Բարկացաւ Ալթունը և բարկութիւնից դողաց ամբողջ մարմնով, որովհետեւ իր խնշոյքը փշացաւ: Դէմքը խոժոռեց, բերանը բաց արաւ և ուժգին ձայնով կանչեց.

— Դահիճ, դահիճ, դահիճ...

Մարդիկ վեր թռնաւ տեղերից և անշարժ ցցւեցին ինչպէս արձաններ, իսկ Ամիր-

խասը դեղնեց, ինչպէս իր կողքի մարմարէ սիւնը:

Սե դահիճը ներս մտաւ, ահագին մերկ սուրը ուսին և մինչև գետին գլուխ խոնարհելով կանգնեց դռան մօտ:

Թագաւորը մասն ուղղեց Ամիրխասին և դառնալով դահիճին, հրաման տւեց գլխատելու: Բայց Խիկարը, որ մինչև այդ վրդոված նայում էր Փուշքարին, առաջ եկաւ, գլուխ տւեց թագաւորին և ասաց.

— Տէր, արդարութեան պահապան: Լաւ է, որ ամեն մի հրամանի վրա մի անգամ արեւ ծագի. գիշերւայ հրամանը լաւ է, որ լուսով կատարւի...

Եւ դառնալով հանդիսականներին, ասաց.

— Այս մարդուն ինչպէս դուք չէք ճանաչում, այնպէս էլ ես.

բայց այսօր սա իմ հիւրն էր և իմ տանից է ուղևորւել այստեղ. ես հիւրասէր չէի լինի, եթէ նրան իմ տանից դէպի մահ առաջնորդէի. և սրանից յետոյ Խիկարի տան դուռը այլ ևս ոչ մի օտարական չէր բաղխի: Ուստի խնդրում եմ, տէր թագաւոր, և դժբ հանդիսականներ, թոյլ տաք իմ հիւրին տանել ինձ մօտ: Կը պահեմ այս գիշեր իմ յարկի տակ պատուով, իբրեւ հիւր, վաղը ճանապարհ կը գցեմ նոյնպէս պատուով, և ապա դուք կարող էք նրան բռնել ու դատել, ինչպէս ուղում էք:

— Ո՛չ, — ասաց Փուշքարը, — Խիկարը իմաստուն է և նրա իմաստութեան առաջ փակւած մտքեր են բացւում:



Նա գիշերը կարող է խրատել այս աւագակին և հնարքներ սովորեցնել, արդարութեան ձեռքից ազատելու:

Թագաւորը տատանման մէջ էր: Ամիրխասը գլուխը մինչև գօտին խոնարհած, ձեռները կախ գցած, աչքի տակով նայում էր դահիճին ու դողում ինչպէս փայտից կապած լաթի կըտորը քամու առաջ: Խիկարը նայեց նրա դողացող մարմինը և հանդիսաւոր ձայնով ասաց.

— Թագաւորի ու պալատականների առաջ խոստում եմ տալիս, որ ամբողջ գիշեր, և վաղը, մինչև ձեզ հանդիպելս այս մարդու հետ ոչ մի բան չեմ խօսի. թող պապանձւի լեզուս, եթէ ես սրա հետ մի բառ անգամ փոխանակեմ: Եւ ոչ էլ կը թողեմ, որ ծառաներս նրա հետ խօսեն:

— Լաւ, — ասաց թագաւորը, — թող լինի քո խօսքը. իմ պետութեան մէջ դեռ չի ծնւել մէկը, որ Խիկարի խոստմանը և ազնիւ խօսքին չը հաւատայ:

Խիկարը լուռ, ձեռքի նշանով իր հիւրին առաջնորդեց դէպի դուռը:

V.

Գնում էր Ամիրխասն անխօս ու դողալով Խիկարի ետեւից: Մտան հիւրի համար պատրաստած սենեակը. նստեցին երկուսն էլ լուռ ու զլխիկոր:

Ամիրխասը ամօթից չէր նայում Խիկարին: Կարծես վախում էր իր շնչառութեան ձայնից և աշխատում էր շունչը իրեն պահել: Իսկ Խիկարը աջ արմունկը դրած ծնկանը, մատներով խաղում էր մօրուքի հետ և աչքը յառած յատակին, խորասուզւել էր մտքերի մէջ:



Յանկարծ Խիկարը վեր թռաւ տեղից և նրա երեսով մի ժպիտ անցաւ: Խիկարը ծափ տւեց և դռան ետեւ սպասող ծառան ներս մտաւ, գլուխ տալով:

— Բեր ինձ ճրագը և մի հատ մահակ:

Ծառան կատարեց հրամանը:

— Դու, դարձաւ Խիկարը ծառային, — անկողինը պատրաստիր և կաց այստեղ մինչև իմ գալը. ես պիտի մտնեմ ախոռ ու գամ:

Ասաց ու դանդաղ դուրս ելաւ սենեակից:

Ամիրխասը, որ աչքի տակով դիտում էր նրա ամեն շարժումը և կարծես հրաշքի պէս մի բան էր սպասում, հետեց նրան:

Խիկարը ճրագն ու մահակը ձեռին մտաւ էջերի ախոռը, որտեղ կապւած էր Ամիրխասի էջը. նա ճրագը դրեց մի բարձր տեղ և մօտեցաւ իշին:

— Գարին կերել ես ու փքւել, խեղճ անասուն, ու իսկի չես էլ մտածում թէ ինչ փորձանքներ կան աշխարհում:


Ու յանկարծ մահակը տարաւ բերեց ու թրրը՝ խկ, իշի մէջքին: Ամիրխասն աչքերը չռած նայում էր:

— Է՛շ, քեզ եմ ասում, այ է՛շ, լաւ լսիր, — գոչեց Խիկարը, երկրորդ հարւածը տալով խեղճ անասունին:

— Հերիք է իշութիւնդ բանացնես, մի անգամ էլ մարդավարի եղիր, ականջ դիր տիրոջդ խրատներին: Է՛շ, բաց արա լայն ականջներդ և լաւ լսիր, որ գայլերի բերանը չընկնիս: Վաղը քեզ տանելու են դատելու և կախաղան կը հանեն կամ տրամ-տրամ կը մորթեն... Լաւ լսիր, այ է՛շ...

Ասում էր ու խփում Խիկարը: Իսկ Ամիրխասը աչքերը չորս արած և ականջները տասնուչորս, լսում էր նրա ձայնը ու այդ ձայնից սարսափում և ուրախանում էր:

— Երբ կը բացւի ատենանը և թագաւորը կընստի դատաւորական բարձի վրա, դու, այ է՛շ, քեզ եմ ասում, լաւ լսիր — թագաւորի և բոլոր դատաւորների ներկայութեամբ հաստատ խօսք առ Փուշքարից, որ դանակը նրանն է: Մի քանի անգամ կըկնել տուր այս բանը և թագաւորին ու դատաւորներին վկայ բռնիր, որ նա ինքը իր բերանով ասաց, թէ դանակը իրենն է: Երբ նա նորից կը պնդի ու երդումով կը հաստատի, այն ժամանակ դարձիր թագաւորին ու ասա,



—Տէր—խնդրում եմ քո տէրութեան գրքերի մէջ նայել տաս: Եօթը տարի առաջ այս ժամանակ, Թաւրիզի ու Բաղդադի մեծ ճանապարհին աւազակներն յարձակեցին հինգ հարիւր ուղտից ու շորուց բաղկացած շորս կարաւանների վրա և կողոպտեցին: Բոլոր ապրանքը, ոսկին ու ականեղէնները տարան և մարդկանց էլ սրախողխող արին. կարաւանի գլխաւոր Հաշի Խամայէլը, կասես, իմ հայրն էր:

«Այս դանակը ես նրա կրծքից դուրս քաշեցի, կասես: Է՛շ, լաւ լսիր, քեզ եմ ասում.—կասես՝ այս դանակը կապեցի գօտուցս ու դուրս եկայ թափառելու: Այդ օրից մինչև օրս ինչքան կեր ու խում է պատահում, ամեն տեղ հանում եմ որ տիրոջը գտնեմ: Այժմ ես գտայ սրա տիրոջը, հօրս սպանողին և այժմ խնդրում եմ, պահանջէք նրանից հօրս արեան գինը: Լաւ լսիր, այ էշ, չըմոռանաս և ոչ մի բառ. համարձակութիւնը քաջութիւն է ոչ թէ խնջոյքի մէջ, գինու թասը ձեռին, այլ դահճի կացնի առաջ...»

Ասաց Խիկարը և նորից մի քանի հարւած տալով անքայող անասունին, մահակը վայր դրեց: Առանց Ամիրխասին նայելու, վերցրեց ճրագը և լուռ գնաց դէպի դուռը:

Երբ Խիկարը բարձրացնում էր ու իջեցնում մահակը իշի մէջքին, Ամիրխասն իշի հետ դողալով կծկւում, կռանում ու բարձրանում էր, կարծես թէ հարւածներն իր մէջքին տեղային: Վերջին հարւածից կծկւած համարեա գետնին էր կպել նա, երբ Խիկարի ձայնն ընդհատեց: Ամիրխասն ուղղեց, թուռ ոտքի և վազեց Խիկարի ետևից հնազանդ ստրուկի նման: Բայց Խիկարը առանց մի բառ ասելու նրան, գնաց իր ննջարանը:

Առաւօտեան Խիկարը անխօս ճանապարհ գցեց նրան իր շէմքից: Թագաւորի ծառաները Խիկարի դարբասի մօտ յեւով Ամիրխասին, իր իշով տարան դատարան:

VI.

Ատեանը բացւեց: Չորս կողմից պալատականները թափւեցին տեսնելու Ամիրխասի պատիժը, որը վիրաւորել էր արքայական քաջ որսորդին և փշացրեց թագաւորի խնջոյքը. եկաւ և Խիկարը ու լուռ կանգնեց պալատականների մօտ, ամենից վերև:

Շեփորները փչեցին, թմբուկները զարկեցին և երևաց Ալթուն արքան: Նա սաստիկ բարկացած էր և ուզում էր իր ներկայութեամբ պատժել ստահակ օտարականին, որ արքայական աղ ու հացը ոտնատակ էր տւել: Կանգնած էր և դահճապետը մի քանի դահիճներով:

Բայց Ամիրխասը էլ չէր դողում ոչ սևամորթ դահճապետի զարհուրելի դէմքից, ոչ թագաւորի կատաղի հայեացքից. չէր

1002
6503



վախում ոչ Փուշքարի վրիժառու աչքերից և ոչ հանդիսականների սուր նայածքներից: Նա համարձակ նայում էր չորս կողմը և միայն խիկարի հայեացքից էր խուսափում:

— Դէհ, ասաց թագաւորը, — խոստովանիր, ռոտեղ և ի՞նչպէս ձեռք բերիր իմ քաջ որսապետի դանակը: Դանի շուտ խոստովանես, այնքան աւելի թեթև կը լինի պատիժդ և այնքան աւագ կը կատարի դահիճն իր պաշտօնը:

— Ո՛հ, տէր արքայ, այդ դանակն իմն է, գոչեց համարձակ Ամիրխասը: Ոչ ոք չի կարող հաստատել, թէ ժանգոտ բերան դանակը արքայական որսորդ Փուշքար իշխանինն է: Ես հեռու երկրից եկած մի օտարական եմ, բայց իմ երկրում հարիւրաւոր վկաներ ցոյց կը տամ, որոնք կը հաստատեն, թէ եօթը տարուց ի վեր, այս դանակը ինձ մօտ է:

— Սուտ է ասում դա, աղաղակեց Փուշքարը, — դանակն իմն է և հէնց եօթը տարի առաջ ինձանից գողացան, երբ անտառում որսից յոգնած, միայնակ քնած էի: Ահա իմ վկաները: Եւ մէկ-մէկ հաստատեցին վկաները նրա ասածները:

— Թող երգւի թագաւորի ու պալատականների առաջ երիտասարդ իշխանը, ասաց Ամիրխասը: Երգելուց յետոյ թող իր խօսքերը հաստատի կնքով, այն ժամանակ ես կը հաւատամ, որ դանակը նրանն է և ճշմարտութիւնը կը խոստովանեմ:

— Այո՛, այո՛, երգւում եմ, վրա բերեց Փուշքարը, հազար անգամ երգւում եմ. թող այսօր արևի հետ իմ արևն էլ մայր մտնի, եթէ այստեղ սուտ կայ: Դանակը իմն է. փողսկրէ կոթը Հնդկաստանից եմ բերել աւել, պողպատէ բերանը Սամարովի հոչակաւոր վարպետ Առուշանն է սրել:

Վկաները նոյնպէս երգեցին և Փուշքարն իր ասածները նորից կրկնեց ու պնդեց:

Այն ժամանակ Ամիրխասը մի քայլ առաջ եկաւ և սկսեց...

Լեզւի կապանքները բացել էին և նրա բերանից համարձակ ու ճարտար խօսքը բղխում էր ինչպէս անհատնում ջուրը ագբիւրի ակից:

— Դէ լսիր, տէր արքայ, և դժբ, պալատական մեծամեծներ: Դուք բոլորդ էլ հաստատեցիք, որ այս դանակը երիտասարդ իշխանինն է: Ես, մի հասարակ հողեղէն, չեմ կարող չը հաւատալ սրա երդմանը և ձեր խօսքերին: Ճշմարիտ է, այս դանակը իմը չէ. ես գողացել եմ: Մինչև օրս փնտռում էի տիրոջը, որ իրեն տամ: Եօթը տարի իզուր փնտռեցի և այսօր Ասածու ողորմութիւնը հասաւ, ու տէրն ինքը լոյս ընկաւ:

«Խնդրում եմ, տէր թագաւոր, քո տէրութեան գիրքը բաց անել տա և հրամայես կարգալ, թէ եօթը տարի առաջ ինչ նշանաւոր բան պատահեց քո տէրութեան մէջ:

«Եօթը տարի առաջ, ճիշտ այս օրերին, Թաւրիզից դէպի Բաղդադ ճանապարհւեց Բաղդադի ամենամեծ կառաւանը, որը չորս հատ ջուր-ջուր կարաւաններից էր կազմւած: Հնդկաստանի ակներով ու փղոսկրով էին բեռնաւորւած առաջին կարաւանի ուղտերը: Հնդկաշինու ամաններ սւ ապակեղէն էր տանում երկրորդ կարաւանը: Իրանի ու Թուրանի մետաքսեղէնով ու թանկագին դիպակներով էին լցւած երրորդ կարաւանի հակերը: Ուտելիքի ու խմելիքի անսպառ պաշար էր տանում նրանց ետևից ջորիների կարաւանը: Եւ Արևելքի ամեն բարիքները վերցրած, հինգ հարիւր ուղտ ու ջորի ճանապարհ ընկան: Չորս կարաւաններից ամենահարուստը Հաջի-Իսմայէլինն էր, որը կարաւանների առաջնորդ դարձաւ:

«Ճանապարհ օրւայ ճանապարհ էին կտրել, երբ աւազակները գիշերով յարձակեցին կարաւանի վրա: Բոլոր ուղեկիցներին, սկսած առաջնորդից մինչև վերջին ծառան, կոտորեցին: Ապրանքն ու հարստութիւնը կողոպտեցին: Հաջի-Իսմայէլի ամ-

բողջ հարստութիւնը այդ կարաւանի մէջ էր. նրա մահով որ-
բացան ու տնանկացան նրա կիներն ու զաւակները: Կիներ մար-
դու մահւան լուրն առնելով, գետին ընկաւ ու շունչը փչեց:
Չորս փոքրիկ որբերը մերկ ու բոկոտն փողոցներն ընկան: Իսկ
մեծ որդին գնաց հօր դիակը գտնելու, որ գազաններն ու ագ-
ռաւները չը պղծեն նրան: Շատ սար ու ձոր ընկաւ, գետ ու
անտառ անցաւ և վերջը մի կիրճի մէջ հօր այլանդակաժ դիա-
կը տեսաւ: Վազեց նրա մօտ, որ նրա երեսին որդիական ար-
ցունքներ թափի: Գրկեց նրան և նրա կրծքից մի դանակ
դուրս քաշեց:

«Դրանից յետոյ, ամբողջ եօթը տարի, էլ ոչ քուն ունէր
Իսմայէլի որդին և ոչ ծածք ու հաց: Մի հատիկ էշը վերցրած՝



թափառում էր նա քաղաքէ-քաղաք, գիւղէ-գիւղ: Մտնում էր
հարստի ու աղքատի տուն, որտեղ հարսանիքի խնջոյք կար,
կամ մեռելի սգահաց: Հանում էր ամեն տեղ դանակը, հրամ-
ցնում էր պատահողին, որ մի գուցէ գանի տիրոջը, իր հօրն

սպանողին: Եւ ահա եօթն ամառ արեւի տակ խաշւելով և եօթը
ձմեռ սարերի բքից թափւելով, այսօր նա քո առաջն է տէր...
Ե՛ս եմ Հաջի-Իսմայէլի որդին, և այս դանակը իմ հօր կրծքից
եմ դուրս քաշել: Ահա իմ հօրն սպանողը և դանակի տէրը: Պա-
հանջիր նրանից, ո՛վ արդարադատ թագաւոր, հօրս արեան գի-
նը և կորցրած հարստութիւնը...»

VII.

Պալատականների հետ թագաւորը մինչև անգամ՝ դողաց
այս խօսքերից: Փուշքարը սպրդնեց, նրա ծնկները դողդողա-
ցին և քիչ էր մնում գետին տապալւէր:

— Ո՛չ, դանակը իմը չէ, գողաց նա դողդոջուն ձայնով,
բայց նայելով թագաւորի դէմքին, խօսքը կտւ տւեց ու դեղնեց:

— Հօրս արեան գինն եմ ուզում, ո՛վ արդարադատ թագա-
ւոր, գողում էր Ամիրխասը, հետգհետէ ձայնը բարձրացնելով:

— Մահը քիչ է, գոչեց թագաւորը. հա-
նեցէք դրանից իշխանական դէնքերը, զար-
դերն ու շորերը: Խւեցէք դրանից ամբողջ
հարստութիւնը: Աճուրդի դէք նրա բոլոր
կայքերը և ոսկին ու ակնեղէնները տւէք
Իսմայէլի որդուն: Հագցրէք դրան իր ըն-
տանիքով սարուկի շորեր և նա թող դառ-
նայ Իսմայէլի որդու ջուր կրող զրաւոր:

— Գթութիւն...

— Խեղդող ձայ-
նով մռնչաց Փուշ-
քարը և երեսփրա
ընկաւ գետին:



—Աւագակիրն ու մարդասպանին գթութիւն չը կայ,—գոչեց թագաւորը:

—Այո, գթութիւն չը կայ աւագակիրն, աղաղակեց Ամիրխասը, — գլխատել տուր նրան, տէր...

Փռնաբար սողաց դէպի Ամիրխասը, գթութիւն հայցելով, բայց Ամիրխասի սիրտը քար էր կտրւել:

Դահիճներն ուղու մէջ կապկապել Փռնաբարին, բայց խկարը, որի հրամանը դահիճների համար թագաւորի հրաման էր, ձեռքով նշան արաւ սպասելու և առաջ եկաւ:

—Թագաւոր, երկու խօսք տուր ինձ. և հրաման առնելով, դարձաւ Ամիրխասին ու ասաց ժպտալով:

—Դու, ով անծանօթ օտարական, լսիր ինձ այնպէս, ինչպէս գիշերը էշն էր լսում գաւազանիս հարւածների տակ կուշ ու ձիգ անելով: Մի լինիր իշափարի մարդ՝ ինչպէս երէկ. այլ եղիր մարդավարի էշ՝ ինչպէս գիշերն էիր ախոռում...

—Մահը մեր ձեռքին է ու չարը մեր քայլերի մէջ. ոչ ոք չի կարող մահից փախչել ու փորձանքից հեռու կենալ: Երէկ մահը Փռնաբարի ձեռքին էր, այսօր՝ քո: Երէկ նրա ամեն մի քայլն էր քեզ համար փորձանք, այսօր՝ քոնը նրան: Ի՞նչ օգուտ, եթէ նա քեզ սպանել տար քո անամարութեան պատճառով. կամ ի՞նչ օգուտ, եթէ դու նրան սպանել տաս իր անապարծութեան համար: Ո՞վ է Հաջի-Իսմայէլը—ոչ դու ես ճանաչում նրան և ոչ Փռնաբարը. թող երիտասարդին ազատ, վերցրու դանակդ ու գնա քո ճանապարհը...

Բոլորը զարմացած միմեանց էին նայում ու լաւ չէին հասկանում բանի էութիւնը: Խիկարը դառնալով Փռնաբարին, ասաց.

—Մարդուն փորձանքի մէջ գցելը հեշտ բան է. բայց անմեղ մարդու վրա յանցանք բարդելն էլ դժւար չէ: Դու, երիտասարդ իշխան, անմասն ես Հաջի-Իսմայէլի սպանութեանը և չըպիտի դահճի կացնի հարւածների տակ գլուխդ մեկնես: Բայց լաւ իմացիր, ուրիշի միամտութեան վրա ծիծաղելը և

ուրիշին դուր փորձանքի մէջ գցելը մեղ համար փորձանքի դուր կը բանայ: Եւ որովհետեւ դու քո անապարծութեան պատճառով ուրիշին մահւան փորձանքի մէջ էիր գցում, արժէ, որ քաւես յանցանքդ: Դու հարստութեան ու պալատների տէր ես, իսկ այս օտարականը մի թշուառական բախտախնդիր: Մասն հանիր քո հարստութիւնից նրան և նա թշնամութեան փոխարէն թող քեզ օրհնելով հեռանայ մեր երկրից:

Գլխի ընկան ամենքը և հիացմունքով նայում էին խիկարին:

Ձը համբերեց Ալթուն արքան և գլուխ խոնարհելով խիկարի առաջ, ասաց.

—Իմաստուն ես խիկար և քո իմաստութեան առաջ՝ թագ-նըւած արդարութիւնը ծաղկում է, ինչպէս արևի տակ ձնծաղիկը: Կարեկից ես թշուառին, և կարեկցութիւնը քո իմաստութեան պարտիզի մէջ ամենագեղեցիկ վարդն է: Եւ թող այդ վարդը մշտապէս բացւի իմ տէրութեան մէջ:

Օրհնում էին բոլորը խիկարին. իսկ Փռնաբարը չըհամարձակւելով նրա փեշերը համբուրել, մօտեցաւ Ամիրխասին և փաթաթեց վզովը: Տուն տարաւ նրան, լաւ հիւրասիրեց և հազար ոսկի տալով՝ ուղեկցեց մինչև քաղաքի դարպասը...



ՀՀ Ազգային գրադարան



NL0398712

„ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Գատցուկ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Աթ.
Խնկոյեանի 25 Կ.
2. Սէյրի—Դերձակի աշակերտը, վօդէիլ. 10 »
3. Աղւէսն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ—
պսակ—պատկերազարդ հեքիաթներ, . 10 »
4. Ս. Գալաշեան. Կապիկներ, բնագիտական
զրոյց 10 »
5. Մարկ Տէն. Մահւան օղակը, պատմածք,
Թարգմ. Մ. Թաւաքալեանի 7 »
6. Կ. Ստանիսկովիչ. Պստիկ նաւաստին, պատմ-
ւածք, Թարգմ. Սիմակի 5 »
7. Մարգար Աւետիսեան. Երեք խրատ. Պղնձէ
քաղաքի զրոյցներէց. 20 »

Դիմել «Հասկերի» խմբագրութեան. Тифлисъ,
редакция „Аскеръ“.

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

7085

